ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Լևոն Մկրտչյանին-ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Սուրեն Չիբուխչյանից
(դիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Եղբայրության փող. 11 շենք, բն.27
հեռ.093.22.35.04, armenpack@mail.ru
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

Հայաստանի Գործատուների Հանրապետական միության, 03Ա078800
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1.Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.

2.Մոտիվացիոն նամակ՝ հանրային խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ.

3.Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ Ս. Չիբուխչյան

< 26 > ապրիլի 2016թ.

10025-16

Ամփոփ տեղեկանք՝
վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.

1.Համահեղինակությամբ մշակվել են երկու ուսումնական ձեռնարկներ ՄԿՈՒ ոլորտի համար՝
-<<Ավտոմոբիլի կառուցվածք>> (216 էջ):
-<<Տրակտորի կառուցվածք և տեխնիկական սպասարկում>> (224 էջ):

2. Որպես աշխատանքային խմբի ղեկավար իրականացրել եմ միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթության երկու պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ուսումնական պլանների մշակման և վերամշակման աշխատանքները:

3.Իրականացրել եմ ՄԿՈՒ ոլորտի՝ նախնական (արհեստագործական) կրթության դասավանդող անձնակազմի վերապատրաստման դասընթացներ:

4. 2008թ.-ից առ այսօր ՄԿՈՒ ՀԱԽ - ի անդամ:

5. Երևանում կազմակերպվել է Ռուսաստանի Դաշնության ՄԿՈՒ ոլորտում հայտնի <<ԴԻԴԱԿՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ>> ընկերության սեմինար, նվիրված ՄԿՈՒ ոլորտում կիրառվող նորագույն տեխնոլոգիաներին և մեթոդներին՝ <<Աշխարհի հմտություններ>> միջազգային օլիմպիադայի համատեքստում:

6.2015թ. Երևանում կազմակերպված <<Տրանսպորտ, լոգիստիկա,բնօգտագործում-2015>> միջազգային գիտա-գործնական գիտաժողովի համակարգող-համանախագահ:

7.Ակտիվ համագործակցում եմ Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի ուսումնական տարբեր հաստատությունների և կազմակերպությունների հետ:

8.ԱՐՄԵՆՊԱԿ միությունը (նախահգահ՝ Ս. Չիբուխչյան) հանդիսանում է փաթեթավորման և պիտակ-ների դիզայնին նվիրված ուսանողական լավագույն աշխատանքների <<ԼԱՐՈՎԻ ՆԱՐԻՆՋ-2014,2015>> միջազգային մրցույթի կազմակերպիչներից և հովանավորներից մեկը: 2015 թ. մրցույթին Հայաստանից տարբեր համալսարաններից ներկայացվեցին 10 աշխատանքներ, որոնցից 4 ստացան արծաթե, բրոնզե և հատուկ դիպլոմներ:

9. Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Բնապահպանության անվտանգության և բնօգտագործման միջազգային ակադեմիայի անդամ:

Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝
հանրային խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ.

ՄԿՈՒ ոլորտում վերջին տարիներին իրականացվել են լուրջ աշխատանքներ, որոնք միտված են կրթության որակի բարլավմանը, միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, երիտասարդության զբաղվածության ապահովմանը: Դա հանդիսացել է ՄԿՈՒ ոլորտի ուսումնական հաստատությունների և շահագրգիռ կազմակերպությունների, անհատ մասնագետների, ինչպես նաև ՄԿՈՒ ՀԱԿ -ի և ՄԿՈՒ ՀԱԽ-ի արդյունավետ աշխատանքի արդյունքը:

ՄԿՈՒ ոլորտի արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են ինչպես կրթական ծառայություններ մատուցող հաստատությունների, այնպես էլ գործատուների փոխշահավետ և արդյունավետ առարկայական համագործակցության խորացումը, դեռևս առկա բացթողումների վերացումը:

Ներկայումս կարևոր է հանդիսանում Հայաստանի ուսումնական հաստատությունների սովորողների մոտիվացման բարձրացումը, որը կարելի է նաև արդյունավետ իրականացնել միջազգային ուսանողական տարբեր մրցույթներին, օլիմպիադաներին, և այլ միջոցառումներին նրանց ակտիվ ներգրավմամբ և մասնակցությամբ, այս առումով գործատուները պետք է հնարավորինս առարկայական աջակցեն ուսումնական հաստատություններին կոնկրետ մասնագիտական ուղղությամբ:

Հաշվի առնելով գործատուների ակտիվ կապերը և համագործակցությունը արտերկների ինչպես ուսումնական, այնպես էլ տարբեր բիզնես կառույցների հետ, անհրաժեշտ է դրանց հենքի վրա հնարավորինս ներկայացնել նաև ՄԿՈՒ ոլորոտը արտերկրներում, մասնավորապես տարբեր միջազգային ցուցահանդեսներում, բիզնես-համաժողովներում: Դա կարող է լինել նաև, միջազգային ոլորտային ցուցահանդեսներին գործատուների տաղավարներում ուսանողների ակտիվ ներգրավմամբ և նրանց կողմից մշակված աշխատանքների և բիզնես գաղափարների ներկայացմամբ:

Գործատուների առկա հնարավորությունները թերևս հաճախ ոչ բավարար կերպով են օգտագործվում արտադրական, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների կազմակերպման և հաջող իրականացման համար: Անհրաժեշտ է համատեղ մշակել հստակ ռազմավարություն և գործնական համագործակցության երկամյա պլան գործատուների և ՄԿՈ ոլորտի միջև, որպես վերջնարդյունքներից մեկը նախատեսելով՝ ուսանողների աշխատանքի ընդունումը կազմակերպությունում կամ ընկերությունում;

Անհրաժեշտ է նաև գործատուների անմիջական, մասնակցությամբ իրականացնել ուսումնական հաստատությունների հետ համատեղ բիզնես ծրագրեր, որոնք հնարավորություն կտան ապահովել ուսումնական հաստատություններին յրացուցիչ ֆինասական մուտքեր, դասավանդողներին՝ լրացուցիչ հավելավճար, ուսանողներին ստանալ անհրաժեշտ հմտություններ և կարողություններ:

Պետք է աստիճանաբար ներդնել նաև մասնագիտական երաշխավորման համակարգ, որը հնարավորություն կտա ապագա մասնագետին ունենալով ոլորտում հայտնի գործատուների կողմից համապատասխան երաշխավորագիր, ավելի արագ գտնել աշխատշուկայում իր տեղը և հետագա կարիերիայում ունենալ վերելք:

Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և համապատասխան ֆինանսական միջոցնել հայթհայթել <<Աշխարհի հմտություններ>> միջազգային օլիմպիադաներին հանրապետության գերակա ոլորտների համար կադրեր պատրաստող ուսումնական հաստատություններից անհրաժեշտ թվով ուսանողների մասնակցությունը ապահովելու համար;

Հրատապ է դարձել նաև դաստիարակ-խորհրդատուների (наставник) ինստիտուտի ձևավորումը, որը լուրջ միջոց կդառնա երիտասարդների դաստիարակության, զբաղվածության հիմնախնդիրների լուծման և աշխատաշուկայի պահանջարկի բավարարաման համար:

Անհրաժեշտ է բոլորիս սրտացավ մոտեցումը և համալիր արդյունավետ աշխատանքը:

Վերլուծություն
վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը վերջին տարիներին իրականացրել է զգալի աշխատանքներ, որոնք միտված են կրթության որակի բարելավմանը, մասնագիտական կրթության ապահովմանը և մատչելությանը, ՄԿՈ ոլորտի բարեփոխումներին:

Կարևոր բարեփոխումներից են եղել հանրակրթության ոլորտում 12-ամյա կրթության դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության ստեղծման և ներդրման աշխատանքները, ինչպես նաև հանրապետության մանկավարժական և ղեկավար կադրերի կարողությունների հզորացման աշխատանքները: Մասնավորապես երկու տասնյակից ավելի նոր դասագրքերի փորձարկումը և հետագայուն դրանց լրամշակումը և հրատարակումը:

Կարևոր էր նաև հանրապետության գյուղական հիմնական փոքր, քաղաքային միջնակարգ մեծ և ավագ դպրոցներում իրականացված փորձնական վարկանիշավորումը:

Կարևորելով հանրակրթության որակի բարելավումը, որպես կրթության գերակա ուղղություններից մեկը ժամանակակից աշխարհում ինտեգրվելու և հետագա առաջընթաց ապահովելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման խնդիրների լուծման առումով ժամանակին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում ուսումնական համակարգիչների արտադրության զարգացման հայեցակարգը», որն իրապես կնպաստի հայրենական տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը և երիտասարդության զբաղվածությանը:

Սակայն անհրաժեշտ է հստակ խնդիրներ առաջադրել և լուծումներ գտնել նաև Հայաստանի տնտեսության գերակա այլ ոլորտների համար ևս, ինչպիսիք են սարքաշինությունը, ռոբոտաշինությունը, տրանսպորտային համակարգերը, մեխատրոնիկան:

Ներկայումս ինչպես ամբողջ աշխարհում այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում կրթության բնագավառում կարևոր տեղ է տրվել մասնագիտական կրթության ոլորտին: Մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունեն մասնագիտական կրթության ապահովումն ու մատչելիությունը, որը հանրապետության տնտեսական աճի,երիտասարդության զբաղվածության ապահովման, գործազրկության աղքատության ու անհավասարության մեղման կարևորագույն գործոններից մեկն է: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումներն ուղղված են եղել ինչպես մասնագիտական կրթության որակի բարելավմանը, այնպես էլ մեր երկրի աշխատաշուկայի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը: Այս առումով գործնական քայլեր են եղել մասնագիտական կրթության և ուսուցման

(ՄԿՈՒ) համակարգի մարդկային ռեսուրսների կարողությունների շարունակական հզորացումը, կառավարման արդյունավետության բարձրացումը. ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի և ղեկավար անձնակազմի վերապատրաստումը, ինչպես նաև ՄԿՈՒ 4 հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի գործուն կենտրոնների ստեղծումը:

Մշակվել են եվրոպական չափանիշներին համապատասխան նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների երեք տասնակից ավելի պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր: Մշակված չափորոշիչները ստացել են դրական փորձագիտական եզրակացություն ոլորտային հանձնաժողովների կողմից:

ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կարողությունների հզորացումը առանց դասախոսական անձնակազմի և ուսումնական վարպետների վերապատրաստման անհնարին կլիներ, այս առումով առանձնապես կարևոր էր ուսումնական հաստատությունների ավելի քան հազար դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների, 60 տնօրենների և տնօրենի տեղակալների, չափորոշիչներ մշակող երկու տասնյակից ավելի փորձագետների և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների վարապատրաստումը:

Ուսուցման որակի բարձրացման համար կարևոր է նաև անհրաժեշտ մեթոդական ապահովածությունը, ՄԿՈՒ համակարգի համար մշակված և հրատարակված 20 –ից ավելի անուն ուսումնական ձեռնարկ-ները և ուսումնամեթոդական նյութերը ունեն կարևոր նշանակություն ևս:

2013 թվականին ՀՀ ԿԳ նախարարության և Հայ ոսկերիչների համաշխարհային ասոցիացիայի միջև կնքված համագործակցության հուշագիրը լավ հիմք հանդիսացավ մասնագիտական կրթության և ուսուցման շարունակական զարգացումը, ուսումնական հաստատություն-գործատու գործընկերային կապերի ամրապնդումը, հաստատությունների շրջանավարտների զբաղվածությունը ապահովելու համար:

Նախարարության կողմից կարևորվել է մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրները, որոնց արդյունքում Եվրոպական կրթական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ 12 տարածաշրջանային քոլեջներում կարիերայի կենտրոնների ներդրման և գործարկման ուղղությամբ: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում իրականացված զգալի աշխատանքների արդյունքում ստեղծվել են անհրաժեշտ հիմքեր ուղղված՝ կրթության որակի, մատչելիության և մրցունակության խթմանը, Հայաստանում տեխնոլոգիաների և նորարարության զարգացմանը, բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարելավմանը, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթական համակարգը Եվրոպական կրթական տարածքում ճանաչելի դարձնելուն:

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգի մեթոդաբանության, ցուցանիշների, հաշվարկի մեխանիզմների մշակված համակարգը թույլ տվեց իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում, որը խիստ կարևոր է ԲՈՒՀ-երի հաշվետվողականությունը և թափանցիկությունը բարձրացնելու համար:

Բարձրագույն տեխնոլոգիական կրթության ոլորտում ժամանակակից լաբորատորիաների ստեղծմանը նախարարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում, սրա վառ ապացույցն է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի 10-րդ մասնաշենքի շահագործումը, որի արդյունքում մասնաշենքն ամբողջությամբ համալրվել է համապատասխան գույքով և ժամանակակից լաբորատոր սարքավորումներով:

Սոցիալական արդարության ապահովման առումով խիստ կարևոր էր 2013 թվականին մեկնարկած «Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին» գործընթացը, որի նպատակով սահմանվել է միջին որակական գնահատականի շեմ, արդյունքում հնարավորություն է ընձեռվել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնել ավելի քան երկու հազար ուսանողի համար:

Գործնակա արդյունավետ քայլերից էր նաև բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահագործումը:

ԲՈՒՀ-երի ինքնուրույնությունը մեծացնելու նպատակով իրականացվեց բարձրագույն ուսումնական մի քանի հաստատությունների պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակից անցում կազմակերպաիրավական նոր ձևի՝ հիմնադրամի, որը հույս ունենք բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների իրականացման համար լուրջ և արդյունավետ գործիք կդառնա:

Իրականացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում Բոլոնիայի քարտուղարության գործունեության ապահովման աշխատանքները:

Բարձր գնահատելով կրթության ոլորտում ՀՀ ԿԳ նախարարության իրականացրած աշխատանքները, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև այն քայլերը, որոնք գործնականում կնպաստեն կրթության որակի բարձրացմանը և առկա հիմնախնդիրների լուծմանը:

Դրանք են՝

-ՀՀ կրթության և գիտության նախարարության և Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հետ համատեղ համագործակցության ռազմավարության և գործնական քայլերի իրականացման ծրագրի մշակում՝ միտված երիտասարդության զբաղվածության ապահովման, գործազրկության նվազեցմանը,

- գործատուների հետ համատեղ իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում, ելնելով տնտեսության զարգացման գերակա ուղղություններից;

- նախապատրաստել անհրաժեշտ իրավական հիմք օժանդակելու գործատուներին, պրակտիկաների կազմակերպման և երիտասարդ մասնագետներին աշխատանքի տեղավորման հարցերում, երիտասարդների կողմից մշակված գիտա-տեխնիկական նորարարական աշխատանքների ներդրմանը;

-հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական պայմանները մշակել անհրաժեշտ հիմքեր արագ անցում կատարելու ռազմական ոլորտի համար անհրաժեշտ գիտա-տեխնիկական կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը;

-ձևավորել աշխատանքային խումբ քննարկելու << Պաշտպանության նախարարության հետ մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրով շրջանավարտների համար, որոնք չունեն գիտական աստիճան՝ պարտադիր զինվորական ծառայությունը անցկացնելու առանձին գիտա-տեխնիկական ուղղվածությամբ ստորաբաժանումներում, որը հնարավորություն կտա օգտագործելով նրանց գիտա-գործնական կարողությունները և հմտությունները՝ դրանք ուղղել կոնկրետ ռազմական ուղղությամբ վերջնարդյունքների ստեղծմանը և ներդրմանը;

-գործատուների և գործարարների հետ համատեղ քննարկել բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ձևավորման հարցերը, հաշվի առնելով տնտեսության զարգացման ռազմավարական գերակա ուղղությունները և տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրավիճակը;

-ուսումնական հաստատություններին խրախուսել և ուղղորդել կոնկրետ բիզնես ծրագրեր մշակել և իրականացնել՝ գործատուների հետ համատեղ: